ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԽՄԲԱԿԻ ԾՐԱԳԻՐ

«Կպդա՛ , պատանի՛ ընթերցասեր»

Վանաձորի Դանիել Վարուժանի անվան №16 հիմնական դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Աննա Գյուլինյան

Բովանդակություն

1. Ծրագրի հակիրճ նկարագրություն 3
2. Բացատրագիր/հիմնավորումը 3
3. Ծրագրի կապը հանրակրթության պետական չափորոշչի հետ 4
4. Ծրագրի նպատակները 4
5. Վերջնարդյունքները 4
6. Պահանջվող նյութատեխնիկական բազա 5
7. Թեմատիկ պլանավորում 6
8. Աշխատանքների բովանդակությունը եւ իրականցման համառոտ բնութագիրը 10
9. Գրականության ցանկ 13
10. Հավելված 14

1. Ծրագրի հակիրճ նկարագրություն

Արտադպրոցական ընթերցանության խմբակի նպատակն է բարելավել և զարգացնել հանրակրթական դպրոցի 5-րդ դասարանում սովորողների ընթերցանության հմտությունները՝ թիրախավորելով գրավոր և բանավոր խոսքի զարգացումը, հարուստ բառապաշարի ձևավորումը և քննադատական մտածողության զարգացումը: Ընթերցանության շուրջ առկա հետազոտություններից պարզ է դառնում, որ ընթերցանության հմտության զարգացումը մեծ ու դրական ազդեցություն է ունենում աշակերտների ակադեմիական առաջընթացի ու ուսումնառության ընդհանուր մոտիվացիայիզարգացման և ձևավորման առումով: Ծրագիրը ներառելու է հետևյալ ժամաքանակը.

Կիսամյակ/շաբաթ	Դասաժամեր
Կիսամյակ 1/15 *շաբաթ*	30 *դասաժամ*
Կիսամյակ 2/19 *շաբաթ*	38 *դասաժամ*
Ընդհանուր՝ 34 *շաբաթ*	68 *դասաժամ*

2. Բացատրագիր/Հիմնավորում

Աշակերտների ընթերցանության հմտությունները ունեն մեծ

ազդեցություն նրանց ակադեմիական առաջադիմության վրա: Ընդ որում՝ սա վերաբերում է ոչ միայն մայրենի լեզվի ակադեմիական ուսումնառությանը, այլ առհասարակ բոլոր առարկաներին: Սրա պատճառն այն է, որ ընթերցանության զարգացած հմտության շնորհիվ աշակերտները կարողանում են հասկանալ և արդյունավետ կերպով ներգրավվել ուսումնական գործընթացում՝ ուսումնասիրելով և յուրացնելով առարկայի ակադեմիական բովանդակությունը (National Reading Panel, 2000) :

Արտադասարանային ընթերցանությունը չափազանց կարևոր է միջին դպրոցում՝ հաշվի առնելով առարկայական ընդգրկուն շրջանակը, տարեցտարի բարդացող տեքստերը՝ դժվարըմբռնելի ձևաբանական և շարահյուսական ձևակերպումները, հարուստ բառապաշարը, որոնք մարտահրավերային են դարձնում հատկապես 5-րդ դասարանցիների ուսումնառությունը և հնարավորությունը բավարարել չափորոշչի պահանջները: Այս մարտահրավերները մինչդեռ կարելի է չեզոքանել կամ նվազեցնել՝ ստեղծելով արտադասարանային ընթերցանության միջավայր, որի օգնությամբ սովորողները ձևավորում են հարուստ բառապաշար, զարգացնում բանավոր և գրավոր խոսք ձևակերպելու և ստեղծելու հմտությունները: Կուննիգհամի և Ստանովիչի (Cunningham and Stanovich, 2001) կողմից արված հետազոտությամբ պարզվել է, որ կա դրական հարաբերություն՝ ընթերցած նյութի ծավալի և բառապաշարի զարգացման միջև: Մասնավորապես՝ շատ ընթերցող երեխաներն առավել հարուստ բառապաշար ունեն, քան այն աշակերտները, որոնք քիչ կամ ընդհանրապես չեն ընթերցում: Միաժամանակ ընթերցասեր աշակերտները տեսնում են բառերը տարբեր համատեքստերում, տարաբնույթ իմաստներով, որը զարգացնում է տարբեր տեքստեր կարդալու և ըմբռնելու կարողությունը, ինչպես նաև օգնում է պարբերաբար հարստացնել բառապաշարը: Սրան զուգահեռ պարզվել է, որ դրական փոխահարաբերություն կա՝ ընթերցանության և քերականության միջև (Nagy, Berninger, and Abbott, 2006): Նագի, Բերինգերի և Աբբոթի կողմից պարզվել է, որ ընթերցող աշակերտները նաև քերականորեն են ճիշտ ձևակերպում նախադասությունները և ունեն զարգացած թե՛ գրավոր, թե՛ բանավոր խոսք:

3. Ծրագրի կապը հանրակրթության պետական չափորոշչի հետ

Արտադպրոցական ընթերցանության ծրագիրը սերտորեն կապված է հանրակրթության պետական չափորոշչի հետ: Մասնավորապես՝ ծրագրին մասնակցող աշակերտը կկարողանա.

- *Հասկանալ կարդացած տեքստը և մատնանշել պատմվողդեպքերի հաջորդական ընթացքը,*
- *Առանձնացնել տեքստում գլխավոր միտքն արտահայտող,հերոսներին բնութագրող բառերը, նախադասությունները,*
- *Կազմել տեքստի պլանը, վերաշարադրել տեքստն ըստ պլանիկամ ստեղծագործաբար,*
- *Կարդալ ընտրովի հատվածներ, բացատրել ընտրությունը,*
- *Բացատրել անծանոթ բառերը բառարանի օգնությամբ, գտնել տեքստում հանդիպած բառերի հոմանիշները, հականիշները,*
- *Կազմել տեքստի պլանը պարզ նախադասություններով, հարցական նախադասություններով, բառակապակցություններով,*
- *Գտնել տեքստի բանալի բառերը նախադասությունները, բացատրելընտրությունը:*

4. Ծրագրի նպատակները

1. *Ներկայացնել ընթերցած գեղարվեստական նյութի հիմնականգաղափարը և երկրորդական գաղափարները,*
2. *Հարստացնել բառապաշարը, զարգացնել բանավոր խոսքը,*
3. *Զարգացնել կարդալու և գրելու կարողությունները,*
4. *Արժևորել ընթերցանության դերը սեփական մտքերը, զգացմունքներն,կարիքներն ու ցանկությունները արտահայտելուհարցում:*

5. Վերջնարդյունքները

- *Արտահայտել մտքերը պարզ, հասկանալի՝ հավատարիմ մնալով թեմային,*
- *Ձևակերպել հարցեր լսածի, տեսածի, զգացածի, ընթերցածի, իրեն հետաքրքրող հարցերի մասին,*
- *Ունկնդրել գրական և ոչ գրական տեքստեր, պատասխանել հիմնական բովանդակության վերաբերյալ հարցերին:*
- *Հասկանալով և պահանջվող արագությամբ ընթերցի արձակ և չափածո գրական տեքստեր, բացատրի որոշ բառերի իմաստը համատեքստում:*
- *Արտահայտել ունկնդրածի կամ ընթերցածի վերաբերյալ հույզերն ու մտքերը գրավոր/բանավոր խոսքի, ինչպես նաև ժեստերի, դիմախաղի, մարմնի լեզվի միջոցով:*
- *Ճանաչել բառը որպես պատկերավորման միջոց:*
- *Խոսքի մեջ առանձնացնել հոմանիշ և հականիշ բառերը:*
- *Արժևորել մայրենի լեզվի դերը իր կյանքում, հաղորդակցվելիս պահպանել ուղղախոսական կանոնները:*

6. Պահանջվող նյութատեխնիկական բազա

- *Գրքեր*
- *Աշխատանքային ձևաթղթեր*
- *Գունավոր մատիտներ/մարկեր*
- *Ֆլիպչարտ*
- *Պրոյեկտոր*
- *Համակարգիչ*

7. ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

(շաբաթական 2 ժամ, *տարեկան 68 ժամ*)

Կիսամյակ I				
Հ/Հ	ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	ՆՊԱՏԱԿ	ԺԱՄԱՔԱՆԱԿ	ՆՇՈՒՄՆԵՐ
1.	**Ջոան Ռոուլինգ ‹‹Հարի Փոթերը և փիլիսոփայական քարը››**	• *Ներկայացնել ընթերցած գեղարվեստական նյութի հիմնական գաղափարը* • *Հարստացնել բառապաշարը, զարգացնել բանավոր խոսքը* • *Զարգացնել բանավոր և գրավոր խոսքի հմտությունները* • *Հետաքրքրություն և սեր առաջացնել արկածային և ֆանտաստիկ գրականության հանդեպ* • *Զարգացնել վերլուծելու կարողությունը*	**7 ժամ**	
2.	**Ռոբերտ Լուիս Ստիվենսոն ‹‹Գանձերի կղզին››**	• *Ներկայացնել ընթերցած գեղարվեստական նյութի հիմնական գաղափարը* • *Հարստացնել բառապաշարը, զարգացնել բանավոր* • *Հետաքրքրություն և սեր առաջացնել արկածային գրականության հանդեպ* • *Վերլուծել դրական և բացասական կերպարին*	**7 ժամ**	
3.	**Ջաննի Ռոդարի ‹‹Չիպոլինոյի արկածները››**	• *Ներկայացնել ընթերցած գեղարվեստական նյութի հիմնական գաղափարը* • *Հարստացնել բառապաշարը, զարգացնել բանավոր խոսքը* • *Նպաստել այլաբանորեն ներկայացված գեղարվեստական երկի ճիշտ մեկնաբանությանը* □	**6 ժամ**	

4.	**Մարկ Տվեն** **‹‹Թոմ Սոյերի արկածները››**	• *Ներկայացնել ընթերցած գեղարվեստական նյութի հիմնական գաղափարը* • *Հարստացնել բառապաշարը, զարգացնել բանավոր և գրավորխոսքը* • *Հետաքրքրություն և սեր առաջացնել արկածային գրականությանհանդեպ* • *Զարգացնել վերլուծելու կարողությունը*	6 *ժամ*	
5.	**Ջեյմս Մեթյու Բարրի** **‹‹Փիթեր Փեն››**	• *Ներկայացնել ընթերցած գեղարվեստական նյութի հիմնական գաղափարը* • *Հարստացնել բառապաշարը, զարգացնել բանավոր խոսքը* • *Հետաքրքրություն և սեր առաջացնել արկածային և ֆանտաստիկ գրականության հանդեպ* • *Զարգացնել վերլուծելու կարողությունը*	4 *ժամ*	
Ժամանաքանակ՝ 30				

Կիսամյակ II				
	Բովանդակություն	**Նպատակ**	**Ժամաքանակ**	**Նշումներ**
6.	**Ջեյմս Մեթյու Բարրի** **‹‹Փիթեր Փեն››**	• *Ներկայացնել ընթերցած գեղարվեստական նյութի հիմնական գաղափարը* • *Հարստացնել բառապաշարը, զարգացնել բանավոր խոսքը* • *Հետաքրքրություն և սեր առաջացնել արկածային և ֆանտաստիկ գրականության հանդեպ* • *Զարգացնել վերլուծելու կարողությունը*	3 ժամ	
7.	**Ռոալդ Դալ** **‹‹Չարլին և շոկոլադի գործարանը››**	• *Ներկայացնել ընթերցած գեղարվեստական նյութի հիմնական գաղափարը* • *Հարստացնել բառապաշարը, զարգացնել բանավոր խոսքը* • *Հետաքրքրություն և սեր առաջացնել արկածային և ֆանտաստիկ գրականության հանդեպ* • *Զարգացնել վերլուծելու կարողությունը*	*7 ժամ*	
8.	**Անտուան դը Սենտ – Էքզյուպերի** **‹‹Փոքրիկ իշխանը››**	• *Ներկայացնել ընթերցած գեղարվեստական նյութի հիմնական գաղափարը* • *Հարստացնել բառապաշարը, զարգացնել բանավոր խոսքը* • *Նպաստել այլաբանորեն ներկայացված գեղարվեստական երկի ճիշտ մեկնաբանությանը*	*7 ժամ*	

9.	**Վիլյամ Սարոյան** **‹‹Մայրի՛կ, ես սիրում եմ քեզ››**	• *Ներկայացնել ընթերցած գեղարվեստական նյութի հիմնական գաղափարը* • *Հարստացնել բառապաշարը, զարգացնել բանավոր խոսքը* • *Հետաքրքրություն և սեր առաջացնել օտարագիր հայ գրողների ստեղծագործությունների նկատմամբ* • *Զարգացնել վերլուծելու կարողությունը*	*7 ժամ*	
9.	**Ա. Լինդգրեն** **‹‹Էմիլը Լյոնեբերգայից››**	• *Ներկայացնել ընթերցած գեղարվեստական նյութի հիմնական գաղափարը* • *Հարստացնել բառապաշարը, զարգացնել բանավոր խոսքը* • *Նպաստել սովորել սովորելու և լեզվական գրագիտություն կարողունակությունների զարգացմանը* • *Հետաքրքրություն և սեր առաջացնել արկածային գրականության հանդեպ* • *Զարգացնել վերլուծելու կարողությունը*	*7 ժամ*	
10.	**Ֆրենսիս Էլիզա Բարնեթ** **‹‹Խորհրդավոր պարտեզը››**	• *Ներկայացնել ընթերցած գեղարվեստական նյութի հիմնական գաղափարը* • *Հարստացնել բառապաշարը, զարգացնել բանավոր խոսքը* • *Նպաստել սովորել սովորելու և լեզվական գրագիտություն կարողունակությունների զարգացմանը* • *Հետաքրքրություն և սեր առաջացնել արկածային գրականության հանդեպ* • *Զարգացնել վերլուծելու կարողությունը*	*7 ժամ*	
	Ընդհանուր՝ 38 ժամ			

8. Աշխատանքների բովանդակությունը եւ իրականացման համառոտ բնութագիրը

Աշխատանքի ձեւաչափը		Միջոցառման անվանումը և համառոտ բնութագիրը	Կատարման ժամկետը/ամիսները									
			Սեպ.	Հոկտ	Նոյեմ.	Դեկտ.	Հունվար	Փետր.	Մարտ	Ապրիլ	Մայիս	Նշումներ կատարման մասին
Արտադասարանային	1.	Արտահայտիչ ընթերցանության մրցույթ										
	2.	Գրքի սիրած հատվածի/գլխի բեմականացում										
	3.	Ընթերցած գրքի քննարկում										
	4.	Փոքրիկ հոլովակի պատրաստում ընթերցած գրքի մասին										
	5.	Ընթերցանության շաբաթի կազմակերպում										
	6.	Կարդացած գրքերի փոխանակման խաղ. Կարդա՛, փոխանցի՛ր										

		զարգացի՛ր										
	7.	Խաղ-վիկտորինա ընթերցած գրքի շուրջ										
Արդյունավետության	8.	Կարդացած գրքի էջերի ամենօրյա նշումների գրքույկի ստեղծում և ընթերցանության մշտադիտարկում										
	9.	Կարդացած գրքից ծաղկաքաղի ներկայացում ամեն ամսվա ընտրված դասին										
	10.	Կիսամյակի ընթացքում կարդացած գրքի ներկայացում նկարազարդումների միջոցով										
	11.	Նկարազարդ գրքույկների շնորհանդեսի կազմակերպում կիսամյակի										

		ավարտին										
	12.	Կարդացած գրքի օր յուրաքանչյուր եռամսյակի վերջին դասին										
	13.	Դասը վարում է գրողը.ամեն կիսամյակի ավարտին հանդիպում ժամանակակից գրողներից մեկի հետ										
	14.	Ընթերցանության տեխնիկայի ստուգում յուրաքանչյուր ամսվա վերջում										

9. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ, ՀՂՈՒՄՆԵՐ

1. National Reading Panel. (2000). Teaching Children to Read: An Evidence-Based Assessment of the Scientific Research Literature on Reading and Its Implications for Reading Instruction. National Institute of Child Health and Human Development.

2. Cunningham, A. E., & Stanovich, K. E. (2001). What reading does for the mind. Journal of Direct Instruction, 1(2), 137-149.

3. Nagy, W. E., Berninger, V. W., & Abbott, R. D. (2006). Contributions of morphology beyond phonology to literacy outcomes of upper elementary and middle-school students. Journal of Educational Psychology, 98(1), 134-147.

4. www.wabisabilearning.com/blog/12-strategies-teaching-critical-thinking-skills

5. **Think literacy:Cross-Curricular Approaches, Grades 7-12**

6. **http://www.adlit.org/pdfs/strategy-library/doubleentryjournal.pdf**

9. Հավելված նյութեր

1. Կարդալիս քո նոթատետրում գրառումնե՛ր արա հետևյալ կետերի մասին.

	1. Տեքստի այս հատվածի մասին հարց ունեմ. արտագրի՛ր այդ հատվածը կամ նշի՛ր հատվածի էջն ու քո հարցերը:
	2. Աստղով նշի՛ր այն հատվածները, որոնք շատ կարևոր ես համարում և անպայման պետք է հիշես: Արտագրի՛ր կամ գրի՛ր այդ հատվածների էջերը քո նոթատետրում:
	3. Դո՛ւրս գրիր նոթատետրում նոր բառեր ու արտահայտություններ պարունակող հատվածներ և ընգծի՛ր բառերն ու արտահայտությունները:
	4. Դո՛ւրս գրիր նոթատետրում այն հատվածները, իրավիճակները,որոնք քո մասին են և դու ինքդ նման զգացումներ ես ունեցել իրականում կամ եղել ես նման իրավիճակներում: Ի՞նչ հույզեր ուզգացումներ ես ունենում այդ հատվածը կարդալիս:

	5. Արտագրի՛ր արտահայտություններ, թևավոր խոսքեր կամ հատվածներ, որոնք շատ ես սիրում։
	6. Արտագրի՛ր հետաքրքիր տողեր։
	7. Առանձնացրո՛ւ 3 կարծիք և 3 փաստ քո կարդացած հատվածից և նշումնե՛ր արա դրանց մասին նոթատետրում։

2.Կրկնակի գրառմամբ օրագիր

Ընթերցելու ընթացքում աշակերտը ընտրում է արտահայտություններ, նախադասություններ, որոնք համարում է բովանդակալից կամ հետաքրքիր, այնուհետ գրում է, թե ինչու՞ է առանձնացրել հենց այդ հատվածը (դիտարկում, հարց, վերլուծություն)

Տեքստի էջը	**Հատված տեքստից**	**Իմ մտքերը հատվածի մասին**

3. Կողմ/դեմ՝ ընթերցածի քննադատական վերլուծություն

Ընթերցանության համար օգտագործվող գործիք: *Աղյուսակում գրված են լինում պնդումներ և ընթերցողը ընդգծում է կողմ/դեմ մինչև ընթերցելը և ընթերցելուց հետո, այնուհետև կարելի է քննարկել նաև ինչ տարբերություններ առաջացան կողմ/դեմ-ի շուրջ ընթերցելուց հետո*:

Մինչ ընթերցելը	**Պնդում**	**Էջ #**	**Ընթերցելուց հետո**
Կողմ/Դեմ			*Կողմ/Դեմ*
Կողմ/Դեմ			*Կողմ/Դեմ*
Կողմ/Դեմ			*Կողմ/Դեմ*

4. **Փաստ-կարծիք**

Այս աշխատաթերթիկը օգնում է փաստի և կարծիքի տարբերակմամը: Փաստը կարող է լինել ճիշտ կամ սխալ: Կարծիքը զգացմունքների կամ տեսակետների արտահայտությունն է և հիմնականում դժվար է որոշել դրա ճիշտ կամ սխալ լինելը:Ուսուցիչը գրառում է նախադասություններ, որոնք փաստ են կամ կարծիք, ապա բաժանում է աշակերտներին առաջարկելով ընտրել, որն է փաստ, որը կարծիքը: Աշակերտները կատարում են նշում՝ ընտրելով փաստ կամ կարծիք, ապա փաստի դեպքում բացատրում են, թե ինչպես է հնարավոր ապացուցել, իսկ կարծիքի դեպքում ինչու հնարավոր չէ ապացուցել: Առավել արդյունավետ դարձնելու համար կարելի նաև ծավալել քննարկում կազմելով զույգերը և համեմատելով պատասխաններն ու մեկնաբանությունները:

#	*Նախադասություն*	*Փաստ*	*Կարծիք*	*Պատճառաբանություն/մեկնաբանություն*
1.				
2.				
3.				
4.				

5. Գրքերի հետաքրքրել ու հնարավոր մեթոդներ/եղանակներ

- **Հորինել հարցախույզ**-աշակերտները կազմում են թեմայի շուրջ հարցեր և աշակերտների գնահատումը իրականացվում է այդ հարցերի միջոցով:
  Ուսուցիչը կարող է նաև դիտարկել հարցերի բովանդակությունը մինչ դրանց կիրառումը:

- **Դրամատիկական բեմականացում**-գեղարվեստական ստեղծագործության հիման վրա աշակերտները մշակում են սցենար:

- **Բլոգի ստեղծում և օգտագործում**- աշակերտներին հանձնարարվում է ունենալ իրենց բլոգը, որտեղ տեղադրում են իրենց առարկայական հանձնարարությունները, որոնք կարող են ունենալ լրագրային հոդվածի կամ ինչ-որ թեմայի ուսումնասիրման մասին տեղեկատվություն: Նպաստում է աշակերտների գրավոր խոսքի զարգացմանը, ինքնուրույն դատողությունների ձևավորմանը և տարբեր թեմաների ինքուրույն ուսումնասիրությանը: